«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱՐԵԿ ՄԻՆԱՍՅԱՆ

1980-ականների կեսերից միջազգային հարաբերությունների տեսության մեջ, պետության ուժի ավանդական (ռազմական) ընկալմանը զուգահեռ, սկսեց ամրապնդվել նրա նոր (ոչ ռազմական) ընկալումը: Այդ վերաիմաստավորման գործընթացում բավական մեծ ավանդ է ունեցել Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Նայը: Առաջին անգամ Նայը «փափուկ ուժ» եզրույթը կիրառել է 1990 թ. հրատարակած աշխատանքում[1]: Փափուկ ուժը բնորոշում է «ցանկալիին հասնելու ունակություն դաշնակիցների կամավոր մասնակցության, համակրանքի, գրավչության միջոցով և ոչ թե հարկադրանքի կամ վճարումների»[2], կամ՝ «ցանկալի արդյունքների հասնելու համար մյուսների վրա ազդելու ունակություն՝ օրակարգ սահմանելու, համոզելու և գրավչություն առաջացնելու միջոցով»[3]:

Ցանկացած պետության փափուկ ուժի ամբողջական ընկալման համար բավական կարևոր է պատկերացնել, թե ինչ ռեսուրսների վրա է այն հիմնվում: Ջոզեֆ Նայն իր հայեցակարգում անդրադառնում է փափուկ ուժի ռեսուրսներին և առանձնացնում միջազգային հարաբերությունների ոլորտում պետության փափուկ ուժի 3 հիմնական բաղադրիչ՝

1. մշակույթը (երբ այն գրավիչ է մյուսների համար),
2. քաղաքական արժեքները կամ գաղափարախոսությունը (երբ դրանք գործում են և՛ երկրի ներսում, և՛ նրա սահմաններից դուրս),
3. արտաքին քաղաքականությունը (երբ այն դիտվում է լեգիտիմ և ունի բարոյական նկարագիր)[4]:

Հատկանշական է, որ եթե առաջին երկու բաղադրիչները դիտվում են որպես ազգի պատմական ժառանգության մաս, ապա երրորդը՝ արտաքին քաղաքականությունը, առավել սուբյեկտիվ է և մեծապես պայմանավորված է իշխանության որակներով:

Փափուկ ուժի մշակութային բաղադրիչը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ նյութական և ոչ նյութական ռեսուրսների, որոնք ունեն հավասարազոր նշանակություն: Նյութական մշակույթը բնորոշում է մարդկանց կենցաղը, իսկ ոչ նյութական մշակույթը, որը դրսևորվում է

---

[1] Տե՛ս **Nye J.**, *Bound To Lead*. 1st ed., 1990, New York: Basic Books:

[2] **Nye J.**, Soft Power: The Means to Success in World Politics, 2004, Public Affairs, p. 38.

[3] **Nye J.**, The Future of Power. New York: Public Affairs, 2011, p. 20-21.

[4] Տե՛ս **Nye J.**, Soft Power: The Means to Success in World Politics, էջ 16:

ավանդույթներում, սովորույթներում և սոցիալական ընդունված նորմերում, սահմանում է այդ կենցաղը: Լինելով փոխկապակցված՝ մշակույթի այս երկու ռեսուրսները կարող են արտահայտվել տարբեր ձևերով. ոչ նյութական ռեսուրսները՝ նյութական կրիչների տեսքով (օրինակ՝ կինո, երաժշտություն, ազգային խոհանոց), և հակառակը՝ նյութական ռեսուրսները ժամանակի ընթացքում թափանցում են նաև ոչ նյութական մշակույթի ոլորտ (օրինակ խաչքարերը հայ հոգևոր մշակույթում):

Փափուկ ուժի երկրորդ հիմնական բաղադրիչը պետության քաղաքական արժեհամակարգն է: Ամերիկյան քաղաքական արժեքների շարքում Նայն առանձնացնում է այնպիսի որակներ, ինչպիսիք են ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, բնակչության աճը խթանող հնարավորությունները և այլն[5]:

Ինչպես մշակութային արժեքների պարագայում, քաղաքական արժեքները ևս տարբեր երկրների դեպքում կարող են ունենալ թե՛ ընդհանրություններ, և թե՛ տարբերություններ, միևնույն ժամանակ կարող են մեկ այլ երկրի համար լինել առավել գրավիչ: Ասվածը բավականին ակնհայտ է դրսևորվում քաղաքակրթական ընդհանրությունների և տարբերությունների պարագայում: Թերևս հենց դրանք էին Աֆղանստան և Իրաք՝ ամերիկյան «ժողովրդավարության արտահանման» տապալման հիմնական պատճառները:

Փափուկ ուժի երրորդ բաղկացուցիչը՝ Նայի տեսության համատեքստում ընկալվում է ոչ թե որպես գործողությունների ամբողջություն, այլ պետության միջազգային հեղինակություն, այսինքն՝ միջազգային հանրության կողմից նրա ընդունելի լինելը, աշխարհում նրա լեգիտիմությունը: Միջազգային հարաբերությունների սուբյեկտի արտաքին քաղաքականությունը, դրա հիմքում ընկած սկզբունքները կարող են ազդել մյուսների նախասիրությունների վրա:

Փափուկ ուժն ազդեցության յուրատեսակ մեխանիզմ է՝ ներկայացված «գրավիչ նախասիրությունների» համակարգի միջոցով: Փափուկ ուժի ռեսուրսները բազմազան են և տարբեր երկրների պարագայում բավականին տարբերվում են: Մասնագիտական գրականության մեջ մեծ կարևորություն է տրվում փափուկ ուժի այնպիսի ռեսուրսների, ինչպիսիք են՝

- բարձր (գրականություն, կերպարվեստ, երաժշտություն, թատրոն, բալետ) և զանգվածային (փոփ երաժշտություն, կինեմատոգրաֆիա, ժամանցային հեռուստաշուներ, նորաձևություն) մշակույթների արտահանումը,
- պետության արտաքին քաղաքականությունը (արդյունավետություն, միջազգային իրավունքի պահպանում, մյուս երկրների շահերի ընկալում),
- երկրի ներքին քաղաքականությունը (պետական արդար քաղա-

[5] Տե՛ս **Nye J.**, Soft Power: The Means to Success in World Politics, Public Affairs, 2004, էջ 10:

քականություն, մարդու իրավունքների պաշտպանություն, օրենքի գերակայություն, քաղաքացիական ազատությունների ապահովում),

- տնտեսությունը (հզոր, ճգնաժամերի նկատմամբ դիմացկուն և կայուն տնտեսական համակարգ, գրավիչ բիզնես մշակույթ, բիզնեսի սոցիալական պատասխանատվություն),
- միջազգային լսարան ունեցող ԶԼՄ-ների առկայությունը (որոնք իրենց գործունեության մեջ հաշվի են առնում նաև տվյալ երկրի շահերը),
- կազմակերպված սփյուռքի առկայությունը,
- երկրի ղեկավարի հեղինակությունը միջազգային հարաբերություններում,
- երկրի ազդեցիկությունը միջազգային հարաբերություններում,
- պետական լեզվի տարածվածությունն աշխարհում,
- սպորտը (միջազգային նվաճումներ, միջազգային սպորտային միջոցառումների կազմակերպում),
- բնակչության կյանքի որակը, կյանքի տևողությունը և սոցիալական վճարների չափերը,
- երկրի շահերին համահունչ գործող ոչ պետական կառույցների (ազգային և միջազգային) առկայությունը,
- բնապահպանությունը (երկրի իմիջը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում),
- երկրի կրթական համակարգի հեղինակությունն աշխարհում,
- գիտությունը և նորագույն տեխնոլոգիաները (ժամանակակից նվաճումներ, գիտական հիմնարկությունների և ավանդույթների առկայություն),
- տուրիզմը (երկրի զբոսաշրջային գրավչություն, զբոսաշրջային զգալի հոսք),
- կրոնը (կրոնական արժեքների տարածում, կրոնական ընդհանրություններ),
- մյուս երկրների կողմից տվյալ երկրի իրավական, տնտեսական, կրթական, քաղաքական տարրերի փոխառմանն ուղղված ծրագրերը (օրինակ՝ աջակցություն բարեփոխումների իրականացման, օրենքների մշակման և մասնագետների վերապատրաստման գործընթացներին) և այլն:

Փափուկ ուժի այս ռեսուրսների կարևոր առանձնահատկություններից է դրանց կառավարման և վերահսկողության բարդությունը: Ի տարբերություն կոշտ ուժի, որի հիմնական ռեսուրսները, օրինակ՝ զինված ուժերը, օգտակար հանածոները և այլն, գտնվում են կառավարության ուղղակի ենթակայության տակ, փափուկ ուժի ռեսուրսները՝ արժեքներ, մշակույթ և այլն, կառավարության ուղղակի վերահսկողությունից դուրս են, իսկ դրանց ազդեցությունը կախված է թիրախ լսարանի ընդունելիությունից:

Յուրաքանչյուր պետության փափուկ ուժը ճիշտ պատկերացնելու համար բավականին կարևոր է պոտենցիալ և իրական փափուկ ուժի

տարանջատելը, հակառակ դեպքում պատկերը կլինի ոչ օբյեկտիվ: Պետության մշակույթը, կրթությունը, արժեքները ոչ թե փափուկ ուժ են, այլ ընդամենը փափուկ ուժի ռեսուրսներ, այլ կերպ ասած՝ հնարավոր փափուկ ուժ: Փափուկ ուժի ռեսուրսների տիրապետելը դեռևս չի ենթադրում իրական փափուկ ուժի առկայություն: Օրինակ՝ գրավիչ մշակույթը չի կարող փոխակերպվել իրական փափուկ ուժի, քանի դեռ այն չի օգտագործվում մյուսների վրա ազդելու համար:

Հնարավոր փափուկ ուժի վերափոխումն իրական փափուկ ուժի ենթադրում է որոշակի գործընթաց, իսկ վերջինս՝ նաև համապատասխան հմտություններ, ռեսուրսներ[6]: Այս խնդրին բավական մանրամասն անդրադարձել է Սեուլի ազգային համալսարանի պրոֆեսոր Գեուն Լին: Նա առանձնացնում է այդ գործընթացի երեք փուլ՝

1. փափուկ ռեսուրսների կիրառում,
2. օբյեկտի ճանաչողական գործընթաց,
3. փափուկ ուժի առաջացում[7]:

Այս գործընթացում բավականին կարևոր է նաև օգտագործվող ռեսուրսները կիրառող դերակատարների, թիրախավորված օբյեկտների և ազդեցության ուղիների հստակեցումը, որը, փաստորեն, հենց փափուկ ուժի ռազմավարության խնդիրն է:

Հնարավոր փափուկ ուժը իրական փափուկ ուժի փոխակերպելու համար, ի թիվս համապատասխան հմտությունների և ռեսուրսների, կարևորվում է նաև կոշտ ռեսուրսների առկայությունը: Աշխարհում հազիվ թե հնարավոր է գտնել մի պետություն, որը կարող է գործադրել զգալի փափուկ ուժ, եթե տնտեսական բարդ վիճակում է: Որպեսզի իրական փափուկ ուժը տարածվի՝ ազդեցության սահմաններից դուրս, անհրաժեշտ են կոշտ ռեսուրսներ՝ դրան վստահելիություն հաղորդելու կամ որպես սփռման և հաղորդակցության աղբյուր ծառայեցնելու համար:

Խնդրո առարկա գործընթացը, այսինքն՝ պետության գրավչության մեծացումը թիրախ երկրների համար, ինքնանպատակ չէ: Փափուկ ուժը արտաքին քաղաքականության բավականին բարդ և բազմամակարդակ բաղադրիչ է, որը պետություններին և միջազգային հարաբերությունների մյուս դերակատարներին հնարավորություն է տալիս լուծելու մարտավարական և ռազմավարական խնդիրներ՝ կիրառելով պաշտոնական և ոչ պաշտոնական խողովակները:

Փափուկ ուժի իրացման պաշտոնական մեխանիզմը ենթադրում է արտաքին քաղաքականության և հանրային դիվանագիտության կողմից տվյալ ոլորտի կարգավորում (օրինակ՝ նախագահի աշխատակազ-

---

[6] Տե՛ս **Treverton G. and Jones S.,** Measuring national power // Conference Proceedings, the Rand Corporation, 2005, էջ 5-6 // http://www.rand.org/content/dam/rand/pubs/conf_proceedings/2005/RAND_CF215.pdf

[7] Տե՛ս **Lee G**. 2009 (June), A theory of soft power and Kore's Soft Power // Korrean Journal of Defaense Analysis, Vol 21:2, էջ 211-212:

մի, կառավարության աշխատակազմի, արտգործնախարարության, մշակույթի նախարարության և այլ գերատեսչությունների կողմից):

Փափուկ ուժի կիրառման ոչ պաշտոնական մեխանիզմը հումանիտար ոլորտում արտաքին քաղաքականության խնդիրների լուծման ոչ ֆորմալ ուղիներն են (կինեմատոգրաֆիայի և ժամանակակից զանգվածային մշակույթի այլ արտադրանքի արտահանում, սոցիալական ցանցերի ներգրավում, հասարակական կազմակերպությունների միջոցով քաղաքական ծրագրերի իրականացում և այլն):

Թե՛ պաշտոնական, թե՛ ոչ պաշտոնական մեխանիզմներով փափուկ ուժի իրացման գործընթացում առավելագույն արդյունավետության հասնելու համար ցանկալի է որդեգրել հստակ ռազմավարություն: Փափուկ ուժի ռազմավարությունները բավական տարբեր են՝ պայմանավորված հետապնդած խնդիրներով և նպատակներով: Կարելի է առանձնացնել դրանցից առավել հաճախ կիրառվողները:

1. **Մանիպուլյացիա կամ իմիջի ձևավորում՝ անվտանգության միջավայրի բարելավման համար:** Այս ռազմավարությունը կիրառած երկրներից են Գերմանիան և Ճապոնիան, որոնք Երկրորդ աշխարհամարտից հետո հրապարակայնորեն զղջացին իրենց կայսերապաշտական ձգտումների համար և իրականացրին խորքային բարեփոխումներ: «Խաղաղության սահմանադրությունը», պաշտպանական ծախսերի սահմանափակումը և ԶՈՒ վերակազմավորումը Ճապոնիային օգնեցին կանխելու իր դեմ ձևավորվող թշնամական դաշինքները ասիական տարածաշրջանում, ավելին՝ կնքվեց ամերիկա-ճապոնական դաշինք: Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա այդ երկրի խաղաղ համագոյակցությունը եվրոպական մյուս երկրների հետ հնարավոր եղավ շնորհիվ անկեղծ զղջման և նացիստների նկատմամբ գերմանացի առաջնորդների և քաղաքական գործիչների դրսևորած բացասական վերաբերմունքի:

2. **Հավաքական գործողություններին աջակցություն ստանալու նպատակով՝ մյուսների իմիջի մանիպուլյացիա:** Այս ռազմավարության դրսևորումներ են ԱՄՆ ղեկավարության կողմից տարբեր պետություններին տրվող որակումները, ինչը նպաստում է, որ Ամերիկայի կողմի գործողությունները ստանան միջազգային աջակցություն: Օրինակ՝ Խորհրդային Միությունը «չարիքի կայսրություն» կամ Իրանը, Իրաքը և Հյուսիսային Կորեան «չարիքի առանցք» որակելը բավականին լուրջ հետևանքներ ունեցան միջազգային հարաբերություններում՝ հանգեցնելով տարբեր պետությունների վերադիրքավորման: Եթե որևէ պետություն ընկալվում է որպես ազատության, ժողովրդավարության պաշտպան, ապա նրա համար առավել հեշտ է ստանալ մյուս երկրների աջակցությունը՝ հավաքական գործողությունների դիմելիս: Այս առումով բավականին մեծ ներուժ ունի ՄԱԿ-ը՝ իր հովանու ներքո գործողություններ իրականացնելու մանդատներ շնորհելով:

3. **Որոշակի արժեքների, նորմերի վրա հիմնված արտաքին միջա-**

վայր ձևավորող ռազմավարություն: Սրա նպատակն է ստեղծել յուրահատուկ միջավայր, որը բարենպաստ է այնպիսի երկրների, ընկերությունների կամ շահագրգիռ խմբերի համար, որոնք որոշակի չափորոշիչների, նորմերի, կանոնների կրող և հետևող են[8]: Որպես օրինակ կարելի է նշել տարբեր ոլորտներում (սննդի անվտանգությունից մինչև ազատության չափումներ) սահմանված միջազգային չափորոշիչները՝ Վաշինգտոնի համաձայնագիրը, անգլերենի միջազգային լեզու լինելը, զարգացման որոշակի մոդելները. այս ամենը ստեղծում է մի միջավայր, որը նպաստավոր է որոշ երկրների, ընկերությունների և այլ դերակատարների համար ու միաժամանակ ազդում է մյուս պետությունների վրա:

4. **Իրավիճակային փոփոխությունն արագացնող ռազմավարություն:** Այս ռազմավարության արդյունավետությունը բարձր է այն դեպքում, երբ թիրախ երկիրը գտնվում է ճգնաժամային կամ անկայուն իրավիճակում, իսկ փափուկ ուժի սուբյեկտն ունի հեղինակություն, վստահելի է, ինչպես նաև կոշտ ուժ կիրառելու հնարավորություններ: Վառ օրինակներից է ԱՄՆ պահուստային ֆոնդերից կարգավորվող «վերբալ ինտերվենցիան»՝ օտար արժույթների փոխարժեքը առավել նվազեցնելու համար, երբ դրանք արդեն իսկ աժեզրկվում են:

5. **Հերոսների և հայտնի անձանց օգտագործումը:** Փափուկ ուժի կիրառման ռազմավարության շրջանակներում հերոսները և հայտնի անձինք կարող են օգտագործվել երկու եղանակով: Առաջինը նմանակելու ենթակա կերպարների ձևավորումն է որոշակի համընդհանուր արժեքների (օրինակ՝ մարդու իրավունքներ, ֆեմինիզմ) վերաբերյալ մեկնաբանությունների կամ բարեգործական գործունեության միջոցով (օրինակ՝ բնապահպանական ուղղվածության): Հերոսի կամ հայտնի անձի հանրահայտությամբ պայմանավորված՝ նրա ազդեցությունը կարող է հասնել անգամ միջազգային մակարդակի: Մյուսը ազգային հպարտության զգացողության ամրապնդումն է. այն ապահովում է ազգային միասնականություն կամ լայն աջակցություն կառավարությանը: Տվյալ դեպքում հերոսները և հայտնի անձինք կարող են գործել անկախ կամ իրենց կառավարության հետ համագործակցելով:

6. **Առաջնորդի հեղինակության բարձրացումը:** Այս ռազմավարությունը ենթադրում է քայլեր (միջազգային միջոցառումների ընթացքում առաջնորդի ճառերի ցուցադրություն, PR ակցիաներ և այլն)՝ ուղղված երկրի ներսում առաջնորդի վարկանիշի բարձրացմանը և հայրենասիրության խթանմանը: Չնայած այս ռազմավարությունը հիմնականում սեփական հանրության համար է, այնուամենայնիվ արտաքին բաղադրիչը տվյալ պարագայում ևս կարևոր է:

Փափուկ ուժի ռազմավարությունները բավականին տարբեր են, և

---

[8] Տե՛ս **Michael Barnett**, **Martha Finnemore.** 1999 (Autumn) // The Politics, Power, and Pathologies of International Organizations International Organization, Vol. 53, № 4, էջ 703-704:

յուրաքանչյուր երկրի պարագայում այն կրում է տվյալ երկրի մշակութային-արժեքային հետքը:

Հատկանշական է, որ փափուկ ուժի ռեսուրսների, ռազմավարությունը կիրառելու և դրանց արդյունավետությունը պատկերացնելու համար առավել քան կարևոր է ուշադրություն դարձնել այն ենթատեքստին, որի պայմաններում կիրառվում է տվյալ ռեսուրսը: Որոշ հեղինակներ, անտեսելով տվյալ գործոնը, փափուկ ուժի իրենց վերլուծություններում մասամբ դրսևորում են թերահավատություն, որը պատճառ է դառնում փափուկ ուժի թերագնահատման:

Ցանկացած իրավիճակ յուրահատուկ է, հետևաբար պահանջում է նաև ռեսուրսների իրացման հատուկ մոտեցում: Օրինակ՝ գերժամանակակից տանկերն անգամ չեն կարող համարվել ռազմական ուժի մեծ ռեսուրս ճահճուտ կամ անտառապատ տեղանքում: Կամ, օրինակ, ամերիկյան ֆիլմերը, որոնք Միացյալ Նահանգները գրավիչ են դարձնում Չինաստանում և Լատինական Ամերիկայում, կարող են հակառակ ազդեցություն ունենալ և փաստացի նվազեցնել ԱՄՆ-ի փափուկ ուժի գնահատականը Սաուդյան Արաբիայում և Պակիստանում: Ենթատեքստային բազմազանությունը հաշվի առնելու խնդիրը մի կողմից կարող է որոշակիորեն բարձրացնել փափուկ ուժի ռեսուրսների իրացման արդյունավետությունը, մյուս կողմից՝ բարդացնել դրանց կիրառումը:

Բանալի բառեր – *Ջոզեֆ Նայ, փափուկ ուժ, փափուկ ուժի ռեսուրսներ, գրավչություն, իմիջ, ռազմավարություն*

НАРЕК МИНАСЯН – *Ресурсы «мягкой силы» и стратегия её реализации.* – В статье рассматриваются основные источники мягкой силы в международных отношениях – культура, политические ценности и внешняя политика – и раскрывается каждый из них. Подчёркивается, как важно дифференцировать потенциальную и реальную мягкую силу, а также трансформировать потенциальную мягкую силу в реальную. В зависимости от задач выделены различные стратегии реализации мягкой силы, применяемые в международных отношениях разными странами.

Ключевые слова: *Джозеф Най, мягкая сила, ресурсы мягкой силы, привлекательность, имидж, стратегия*

NAREK MINASYAN – *The Resources of «Soft Power» and the Strategies of its Realization.* – The author presents the main resources of soft power in international relations - culture, political values and foreign policy, separately revealing each of them. He emphasizes the importance of the difference between the potential and the real soft power, as well as the process of transformation of the potential soft power into the real one. The author outlines various strategies for the realization of the soft power of countries in international relations, taking into consideration the differences of the aims they pursue.

Key words – *Joseph Nye, soft power, soft power resources, attractiveness, image, strategy*